ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2018 թվականի N 77 _Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի կողմից մարզի տարածքում Կառավարության տարածքային քաղաքականությունը համապատասխան բնագավառներում համակարգելու և մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ Հերմինե Համբարձումյանին վերապահել մարզպետի կողմից իրականացվող տարածքային քաղաքականության և մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքների համակարգման լիազորությունները հետևյալ բնագավառներում՝

1) գյուղատնտեսության,
2) առողջապահության,
3) բնապահպանության,
4) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության,
5)միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների հետ աշխատանքների համակարգման.

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Բաբայանին վերապահել մարզպետի կողմից իրականացվող տարածքային քաղաքականության և մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային

ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքների համակարգման լիազորությունները հետևյալ բնագավառներում՝

1) քաղաքաշինության,
2) տրանսպորտի և ճանապարհաշինության,
3) հողօգտագործման,
4) ՏԻՄ և պետական համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման,

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ Գոռ Թադևոսյանին վերապահել մարզպետի կողմից իրականացվող տարածքային քաղաքականության և մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքների համակարգման լիազորությունները հետևյալ բնագավառներում՝

1) ֆինանսների,
2) մշակույթի և սպորտի,
3) կրթության,
4) սոցիալական պաշտպանության,
5) զարգացման ծրագրերի և զբոսաշրջության,
6) զորահավաքային նախապատրաստության և պաշտպանության կազմակերպման.
7) քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության,

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալներին՝ ապահովել նշված բնագավառներում մարզպետի կողմից իրականացվող տարածքային քաղաքականության և մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքների համակարգումն ու օրենսդրությամբ սահմանված լիազորությունների իրականացումը:

5.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014թ. դեկտեմբերի 26-ի N 197-Ա որոշումը:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 06.08.2018 18:06:23 GMT+4

Подписано: HAMBARDZUMYAN KAREN 2611820473

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Կ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

2018թ. հուլիսի 31
ք. Կապան